ԱՐԱՄԵԵՐԵՆ ՆՈՐԱՀԱՅՏ ԵՐԿՈՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանում հայտնաբերված արամեերեն արձանագրությունների ոչ մեծ խումբը համալրվեց ևս երկուսով։ 1971 թ. սկզբներին Դիլիջանից Իջևան տանող ճանապարհից ձախ, Րջևանի շրջանի Թեղուտ գյուղից մոտ հինգ կիլոմետր հյուսիս, «Ձեռի հողեր» հանդամասում գտնվել են «Արտաշիսյան սահմանաքարեր» անունով հայտնի երկու նոր քարակոթողներ։ Դրանց վրա փորագրված արամեերեն արձանագրությունները, եթե նկատի չունենանք հատուկենտ տառերի աննշան վնասվածքները, պահպանվել են անաղարտ վիճակում։

Մինչև հիմա արամեերեն արձանագրություններով նույնատիպ հուշարձաններ հայտնի էին Սևանի ավազանից։ Հայաստանում արամեեատառ առաջին արձանագրությունը հայտնաբերվել է տակավին 1906 թ. Կամոյի շրջանի Կարմիր (Ղուլալի) գյուղում (Ե. Լալայան)[1], երկրորդը գտնվել է 1932 թ. Մարտունու շրջանի Կզնուտ (Կարանլուխ) գյուղում (Ս. Բարխուդարյան)[2]։ 1957—1964 թթ. արամեերեն արձանագրություններով կոթողներ են հայտնաբերվում Մարտունու շրջանի Ծակքար, Լիճք, Վաղաշեն գյուղերում և Սիսիանի շրջանում՝ Իշխանասար լեռան ստորոտում։ 1961 թ. մեր թվագրության III դ. սկզբի արամեերեն արձանագրություն է գտնվել Գառնիի պեղումների ժամանակ[3]։ Թեղուտի նորահայտ կոթողների հետ միասին այժմ արամեերեն հուշարձանների թիվը իննի է հասնում։ Այդ հուշարձանները վերաբերում են Արտաշիսյան հարստության հիմնադիր Արտաշես (մ. թ. ա. 189—160) թագավորի ժամանակներին։

Արամեերեն արձանագրություններով կոթողների նշանակությանը տակավին 1941 թ. անդրադարձել է ակադ. Հովսեփ Օրբելին[4], որի կարծիքով դրանք գյուղերի և ագարակների սահմանները որոշող սահմանաքարեր են եղել։ Ակադ. Օրբելու այդ եզրակացության հիմք են հանդիսացել Մովսես Խորենացու «Պատմության» շատ կարևոր և որոշակի հետևյալ տողերը. «Յետ ամենայն առաքինութեանց և գործոց ուղղութեանց Արտաշիսի, հրամայէ զսահմանս գիւղից և ագարակաց որոշել. քանզի բազմամարդացոյց գաշխարհս Հայոց. նկամուտս բազումս ածելով ազգս, և բնակեցուցանելով ի լերինս և ի հովիտս և ի դաշտս։ Եւ նշանս սահմանացն հաստատեաց այսպէս. հրաման տալով քարինս կոփել չորեքկուսին, և պնակաձև փոսել զմէջսն, ծածկելով յերկրի. և չորեքկուսին ի վերայ յարուցանել ամբարտակս սակաւ ինչ բարձրագոյն յերկրէ»[5]։ Խորենացին հիշատակում է նաև Արտաշեսի հետևողությամբ Սասանի որդի Արտաշիրի կողմից Պարսից աշխարհում համանման կոթող-սահմանաքար կանգնեցնելու վերաբերյալ հրաման արձակելու մասին. «Ընդ որ նախանձեալ Արտաշրի որդւոյ Սասանայ՝ զնոյն նման հրամայէ առնել և ի Պարսից աշխարհին և յիւր անունն անուանել, դի մի՛ ևս յիշնսցի անունն Արտաշիսի»[6]։ Սահմանաքարերի հարցին Խորենացին մեկ անգամ ևս անդրադառնում է Արտաշիր Պապականի գործունեության առնչությամբ. «նաև զսահմանս հաստատեալս յԱրտաշիսէ, զքարինս յերկրի կացուցանելով, նորոգեաց. և յիւր անունն փոխելով Արտաշիրական անուանեաց»[7]։

Ֆրանսիացի գիտնական Ա. Դյուպոն-Սոմերը արամեերեն արձանագրությունների իր սխալաշատ վերծանությունից ելնելով, գտնում է, որ այս կոթողները, իբր, առնչվում են ձկան պաշտամունքային որսի հետ[8]։

---

1 Տե՛ս Ե. Լալայան, Դամբարանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931։

2 Տե՛ս Ս. Բարխուդարյան, Երկու արամեերեն արձանագրություններ։ Նյութեր հին Հայաստանի պատմության, Երևան, 1935։

3 Սևանի ավազանի, Գառնիի, Իշխանասարի արձանագրությունների հրատարակությունները, տե՛ս А. Борисов, Надписи Артаксия (Арташеса), царя Армении, ВДИ, 1946, № 2, էջ. 97—107. A. Dupont-Sommer. Deux inscriptions arameennes trouvées pres du lac Sévan (Armenie). Syria, v. XXV, 1946—1948, № 1—2. И. М. Дьяконов, К. Б. Старкова, Надписи Артаксия (Арташеса), царя Армении, ВДИ, 1955, № 2, էջ 161—174. Г. А. Тирацян, Новонайденная надпись Арташеса I, царя Армении, ВДИ, 1959, № 1. А. Г. Периханян, Арамейская надпись из Гарни, «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 3. А. Г. Периханян, Арамейская надпись из Зангезура, «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 4։

4 См. в книге: К. В. Тревер, Очерки по истории культуры древней Армении, М.—Л., 1953, էջ 164։

5 Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 186։

6 Նույն տեղում, էջ 186։

7 Նույն տեղում, Բ գիրք, ղլ. Հէ։

8 Տե՛ս A. Dupont-Sommer, նշվ. աշխ., էջ 62—63։



Թնդուտի ամրոցական կոթողի լուսանկարը և գծանկարը։



Թևղուտի թերի կոթողի լուսանկարը և գծանկարը։

Հիշյալ արձանագրությունների ուսումնասիրությամբ և վերծանությամբ հաստատվեց ակադ. Օրբելու կարծիքը. պարզվեց, որ դրանք իրոք սահմանաքարեր են՝ կանգնեցված Արտաշես I-ի անունից, որն արձանագրություններում իրեն անվանում է. «Արտաշես որդի Զարիադրեսի Երվանդականս։ Պարզված է նաև, որ հուշարձանի այս տիպը իր ձևով սերում է ուրարտական կոթողներից, որոնք կանգնեցված են եղել քարե պատվանդանի վրա։ Թեղուտի ամբողջական քարակոթողի պատվանդանը թեև չի հայտնաբերվել, սակայն նրա վրա պահպանված պոչուկը թույլ է տալիս պատկերացում կազմելու. այդօրինակ կոթողների ձևի մասին։

Թեղուտի կոթողները ձևով փոքր ինչ տարբերվում են Սևանի ավազանի համանման հուշարձաններից։ Ավազաքարերից կերտված և բոլոր կողմերից մշակված այդ կոթողները վերևում փոքր ինչ լայն են, իսկ ստորին մասում նեղացող ողորկ մակերեսով հաստ քարե սալի տեսք ունեն։ Խորանարդաձև պատվանդանի վերին մակերեսի մեջտեղում փորվել է «պնակաձև փոս»՝ քառակուսի խորություն, որին ագուցվել է պոչուկով սալը։ Ինչպես նախկինում Սևանի ափամերձ վայրերում գտնվածները, այնպես էլ Թեղուտի այս հուշարձանները, ատամնավոր են. վերևի մասում նրանք վերջավորվում են արքայական թագ հիշեցնող երեք ատամներով, ըստ երևույթին ընդգծելու համար թագավորի անունից և նրա հրամանով կանգնեցվելու հանգամանքը։

Թեղուտի կոթողներից ամբողջականը վերևում ունի 42 սմ, իսկ պոչուկի հիմքի մոտ՝ 23 սմ լայնություն։ Բարձրությունը, առանց պոչուկի, 66 սմ է, պոչուկով՝ 98 սմ, հաստությունը՝ 22 սմ (տե՛ս նկարները)։ Արամեերեն արձանագրությունը, որը փորագրված է կոթողի վերին լայն մասում, բաղկացած է հինգ տողից։ Երրորդ և չորրորդ տողերը շարունակվում են կոթողի կողի վրա։ Առաջին տողի վերջին բառի հինգ տառերը զետեղված են փոքր ինչ ներքև, իսկ երկու տառանիշերը դրված են վերևում։

Երկրորդ կոթողը թերի է, նրա ստորին կեսը, պոչուկի հետ միասին, ջարդված է և չի գտնվել։ Պահպանված մասի չափերն են. լայնությունը վերևում՝ 42 սմ, ներքևում (ջարդվածքի մոտ)՝ 33 սմ, բարձրությունը՝ 44 սմ, հաստությունը՝ 22 սմ։ Բարեբախտաբար, արձանագրությունը պահպանվել է ամբողջովին*։ Արձանագրության տառերի միջին բարձրությունը 4 սմ է, տառանիշերը գծված են շատ հստակ։ Առաջին, երրորդ և չորրորդ տողերը շարունակվում են կոթողի կողի վրա։ Երկրորդ արձանագրության տառերը փոքր ինչ խոշոր են, խորը փորված. ակնբախ է, որ նույն գրչի ձեռքով չի գրված։



Թեղուտի ամբողջական կոթողը։

Թեղուտում հայտնաբերված այս երկու հուշարձանների արձանագրությունները արամեատառ հիշատակարանների շարքում առանձնանում են իրենց ընդարձակ ծավալով։ Եթե նախորդ արձանագրությունների տառանիշերի թիվը տատանվում է երկու-երեք տասնյակների միջև, ապա Թեղուտի կոթողների վրա փորագրված տառանիշերի թիվը հասնում է չուրջ հարյուրի։ Ինչպես երևում է, երկու արձանագրություններն էլ նույն բովանդակությունն ունեն, թեև նրանց միջև ինչ-որ տարբերություն-

* Հուշարձանների պահպանության և Հայաստանի պատմության թանգարան փոխադրելու գործում ցույց տված օժանդակության համար շնորհակալություն ենք հայտնում գյուղատնտես Գ. Հակոբյանին և կենսաբան Ռ. Եղոյանին։

ներ նշմարվում են։ Արձանագրությունները դարձյալ փորագրված են Արտաշեսի անունից, որն իրեն անվանում է «արքա Երվանդական», սակայն նրա անունը նախորդ արձանագրությունների RTHSSY-ի ձևից տարբերվում է և, հավանաբար, գրված է հունական ձևով՝ RTKSRKSSY (Արտաքսերքսես)։ Արտաշես Առաջինի հոր անունն ըստ երևույթին բացակայում է։ Չի բացառվում, որ կլինեն նոր անուն (թերևս անուններ), պաշտոնների անուններ (կամ տիտղոսներ), նոր բառեր, նոր իմաստներ։ Այդ ամենի վերծանությունը թողնում ենք արամեերենի գիտակներին։ Առայժմ կարելի է միայն ենթադրել, որ նախորդներից գրեթե հոակի ընդարձակ այս արձանագրությունները կարևոր տվյալներ են պարունակում և կարող են ավելի որոշակի բացահայտել նախորդների իմաստը, լույս սփռելով դեռևս չպարզված խնդիրների վրա։ Ուշադրության արժանի է նաև այն հանգամանքը, որ այս նորահայտ արձանագրությունները ընդարձակում են «Արտաշեսյան սահմանաքարերի» տարածման շրջանակները՝ Սևանա լճի հարավարևելյան ափերից և Սյունիքից բացի ընդգրկելով նաև պատմական Այրարատի Վարաժնունիք գավառը։

Գ. ԿԱՐԱԽԱՆՅԱՆ

Մ. Թ. Ա. VI—III ԴԱՐԵՐԻ ՎԱՂ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՍԵՐԻ ՄԻ ԽՈՒՄԲ

Տարիների ընթացքում Արմավիրի և Գառնիի սիստեմատիկ պեղումների և Հայաստանի տարբեր վայրերում պատահական հայտնաբերումների շնորհիվ հավաքվել է զգալի քանակությամբ հին հայկական խեցեղեն, որն ըստ կիրառական նշանակության, ձևերի, մշակման և հարդարման եղանակների, կարելի է բաժանել զանազան խմբերի։ Մեծ է, մանավանդ, կենցաղային խեցեղենի քանակը, որը ներկայանում է երեք հիմնական խմբերով՝ կոպիտ, դորշ խոհանոցային, սովորական-հասարակ և նրբախեցի-բարձրորակ։ Երեք խումբն էլ հանդես են բերում տեսակների մեծ բազմազանություն՝ մեկ կան-



Նկ. 1



Նկ. 2

թանի սափորներ, ջրաման-տափաշշեր, ծորակավոր ջրամաններ, սկահակատիպ բարձր անոթներ, ուռուցիկ իրանով խոշոր կճուճներ, միջին ու փոքր չափերի կուլիկներ, գավաթ-ըմպանակներ, սկուտեղներ և, վերջապես, թասերի տարբեր տեսակներ։

Հավաքված նյութի բավարար քանակը այժմ հնարավորություն է տալիս քննության առնելու խեցեղենի այս կամ այն առանձին խումբը կամ տեսակը։ Ներկա հոդվածում քըն-